ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 730-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԳՅՈՒՂԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 48 ՀԱՍՑԵԻ 08-004-0123-0075 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սոս Յանուշի Կիրակոսյանը դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին, սեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող 08-004-0123-0075 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,16817 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1992 թվականի ապրիլի 3-ի թիվ 2 որոշումով Սոս Յանուշի Կիրակոսյանի ընտանիքի անդամների անվամբ սեփականաշնորհված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի 28-րդ փողոց, թիվ 48 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 120,06 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են 2000 թվականին, իսկ 66,89 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը կառուցվել է 2014 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետի բ) ենթակետի, և 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության

տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Ազատան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է՝

ՈՐՈՇՈՒՄ Է Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի, 28-րդ փողոց, թիվ 48 հասցեի հողամասի վրա ինքնակամ համարված 120,06 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:

2. Նույն հողամասի վրա 2014 թվականին ինքնակամ կառուցված 66,89 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը օրինականացնել սահմանված վճարների դիմաց:

3. Որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված օժանդակ շինության համար ահմանել 6000 Հայատանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Ազատան գյուղի համար 14-րդ գոտում հաստատված է 0,1209: Ինքնակամ կառուցված 66,89 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքի օրինականացման վճարը կազմում է 48522 (քառասունութ հազար հինգ հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն թվականի դեկտեմբերի 6-ին:

6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«05» դեկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 731-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԻԿ ԳՅՈՒՂԻ 14-ՐԴ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵԻ 08-065-0013-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Վարազդատ Հայկազի Չոլախյանը (ծնված 19/11/1968 թվական) դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ ժառանգության իրավունքով (հիմք նոտարական ակտ թիվ 604-20221102-84-6410314) իրեն պատկանող 08-065-0013-0022 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,208 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Շիրակի մարզի Հացիկ գյուղի 14-րդ փողոց, թիվ 3 հասցեի տնամերձ հողամասի վրա 2011-2013 թվականներին կառուցված 389,54 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, 59,33 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով օժանդակ շինությունները համարվում են ինքնակամ կառույցներ, որոնք կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգի 8, 10, 11, և 13 կետերի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով

սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Հացիկ գյուղի համար 0,0874 է, որոշում եմ՝

1. Քաղաքացի՝ Վարազդատ Հայկազի Չոլախյանին սեփականության իրավունքով պատկանող, Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հացիկ գյուղի 14-րդ փողոց, թիվ 3 հասցեի տնամերձ հողամասի վրա 2011-2013 թվականներին կառուցված 389,54 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և 59,33 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով օժանդակ շինությունները սահմանված վճարների դիմաց ճանաչել օրինական:

   1) Սույն կետով օրինական ճանաչված ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգի 13-րդ կետի ա) ենթակետով նախատեսված վճարը՝ 10000 Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օժանդակ շինությունների համար 6000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Հացիկ գյուղի համար 16-րդ գոտում հաստատված է 0,0874:

   2) Հաշվարկված վճարը ինքնակամ կառուցված 389,54 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տան օրինականացման համար կազմում է 340458 Հայաստանի Հանրապետության դրամ, 59,33 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով օժանդակ շինությունների օրինականացման համար՝ 31113 Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը օրինականացման վճարը կազմում է 371571 (երեք հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր յոթանասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն թվականի դեկտեմբերի 6-ին:

4. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«05» դեկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
գ. Ախուրյան, Գյումրիի խճուղի 42, հեռ. (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2022 թվականի N 732 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՐԻԿ ԼԵՌՆԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ , ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 34.2-րդ կետերի, 35-րդ կետի <<գ>> ենթակետերի, 35.1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայականի արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Ղարիբջանյան գյուղի (Շիրակի մարզ, 16-րդ գոտի) համար 0,0874 է և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-076-0001-0033 կադաստրային ծածկագրով 0,04478 հեկտար մակերեսով հողամասի վրա, քաղաքացի Գարիկ Լեռնիկի Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված 447,8 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին և դրանք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան

համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 721-Ա որոշմամբ ճանաչվել է օրինական, համարվել է համայնքի սեփականություն և անշարժ գույքի նկատմանբ համայնքի իրավունքները ենթարկվել են պետական գրանցման՝

որոշում եմ.

1. Օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված շինությունը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-076-0001-0033 կադաստրային ծածկագրով 0,04478 հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով, օտարելու մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Գարիկ Լեոնիկի Հակոբյանին:

2. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

1) Շինության վաճառքի գինը կազմում է՝ 391498 Հայաստանի Հանրապետության դրամ (447,8 քառակուսի մետր x 20000 դրամ x 0,0874=782754);
2) Արտադրական նշանակության ինքնակամ շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի մեկ քառակուսի մետրի կադաստրային արժեքը սահմանված է 515 Հայաստանի Հանրապետության դրամ: 0,04478 հեկտար մակերեսով հողամասի օտարման գինը կազմում է՝ 0,04478x515x0,6=138370 Հայաստանի Հանրապետության դրամ:
3) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է 782754+138370=921124 (ինը հարյուր քսանմեկ հազար մեկ հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին:
4) Որոշման սույն կետի 3-րդ ենթակետով ձևակերպված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:
5) Ինքնակամ շինություններն իրականացրած անձի կողմից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30 օրյա ժամկետում օրինականացված կառույցների և դրանց համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

6) Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԻԳԻՐՅԱՆ

Գ.Ախուրյան

05 դեկտեմբերի 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
գ. Ախուրյան, Գյումրիի խճուղի 42, հեռ. (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբերի 2022 թվականի N 733 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԻԿ ԳՅՈՒՂԻ 14-ՐԴ ՓՈՂՈՑ, 7-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ՏՈՒՆ 5 ՀԱՍՑԵԻ 08-065-0014-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անահիտ Գարեգինի Հովհաննիսյանը (ծնված 15/02/1953 թվական) դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ իրեն պատկանող 08-065-0014-0018 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,44403 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հացիկ գյուղում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մարտի 30-ի թիվ 1 որոշմամբ Անահիտ Գարեգինի Հովհաննիսյանի անվամբ սեփականաշնորհված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հացիկ գյուղի 14-րդ փողոց, 7-րդ փակուղի տուն 5 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 358,01 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են 1978-1989 թվականներին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11 և 22.1 կետերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հացիկ գյուղի 14-րդ փողոց, 7-րդ փակուղի տուն 5 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառույց համարվող բնակելի նշանակության 358,01 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

գ.Ախուրյան

09 դեկտեմբերի 2022թ.